

**ՀԱՅԱՍՏԱՆԻ 3 ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԱՐԶԵՐԻ  
(ՏԱՎՈՒՇ, ԼՈՌԻ և ՇԻՐԱԿ)  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ  
ՉԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՄՇԱԿՈՒՄ**

**ՓՈՒԼ III - ԼՈՌԻ ՄԱՐԶԻ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ  
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԾՐԱԳԻՐԸ 2022-2025ԹԹ. ՀԱՄԱՐ**

**Ամիս** Փետրվար 2022թ.

**Պատվիրատու՝** Ավստրիայի Չարգացման Գործակալություն  
**Խորհրդատու՝** ԱՄ փարթենըրզ Քոնսալթինգ Քամփնի ՍՊԸ



<b>1</b>	<b><u>ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒ ՊՅՈՒՐԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ</u></b>	<b>3</b>
1.1	ՆԱԽԱԴԱՏՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	3
1.2	ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	3
1.2.1	Տվյալների հավաքագրումը	3
1.2.2	Տվյալների մշակումը և ամփոփումը	4
<b>2</b>	<b><u>ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒ ՊՅՈՒՐԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒԼԵՒՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ</u></b>	<b>5</b>
2.1	ՀԱԿԻՃ ԱՆԴՐԱԴԱՐՁ ՊՅՈՒՐԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ	5
2.1.1	Չարգացման տեսլական	5
2.1.2	Գերակայելի ոլորտներ	5
2.2	ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ 2022-2025ԹԹ.ՀԱՄԱՐ	5
2.2.1	Պայմանական կլաստերային տարանջատում	10
<b>3</b>	<b><u>ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊՅՈՒՐԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022-2025ԹԹ. ԳՈՐԾՈՒԼԵՒՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ</u></b>	<b>11</b>
3.1	2022-2025ԹԹ. ԳՈՐԾՈՒԼԵՒՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ	11
3.2	2022-2025ԹԹ. ԳՈՐԾՈՒԼԵՒՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԻՏՎԱԾ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ	16
<b>4</b>	<b><u>ԳՈՐԾՈՒԼԵՒՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ, ՄՇԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ</u></b>	<b>24</b>
4.1	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ	24
4.2	ՄՇԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ	25

## Հապավումներ

ԱԶԲ	Ասիական Չարգացման Բանկ
ԱԶԳ	Ավստրիական Չարգացման Գործակալություն
ԳԶՄՅ	Գյուղատնտեսության Չարգացման Միջազգային Հիմնադրամ
ԳԽՄԿ	Գյուղատնտեսական խորհրդատվության մարզային կառույց
ԳՏԲ	Մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ԷԼ	Էկոնոմիկայի նախարարություն
ԽԵԿ	Խոշոր եղջերավոր կենդանի
ԿԳԳ	Կանաչ / Կայուն Գյուղատնտեսության Գործողություններ
ԿՄՍ	Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
ՀԱԱՀ	Հայաստանի ազգային ագրարային համալսարան
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ՄԱԽ	Մարզային Աշխատանքային Խումբ
ՄԳԶՌ	Մարզի Գյուղատնտեսության Չարգացման Ռազմավարություն
ՊԳԿ	Պարենի և Գյուղատնտեսության Կազմակերպություն
ՊՄԳ	Պետություն – մասնավոր գործընկերություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

# 1 ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԳՅՈՒԴԱՏՆԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

## 1.1 ՆԱԽԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

«ԵՄ Կանաչ Գյուղատնտեսության Նախաձեռնությունը Հայաստանում ծրագիրը» (Ծրագիր) ֆինանսավորվում է Եվրոպական Միության (ԵՄ) կողմից և համաֆինանսավորվում է Ավստրիական զարգացման համագործակցության կողմից: Ծրագիրն աջակցում է կայուն, ներառական, նորարարական և շուկայահեն ագրոբիզնեսի զարգացմանը, մասնավորապես՝ Հայաստանի հյուսիսային մարզերում Շիրակում, Լոռիում և Տավուշում:

**Սույն առաջադրանքի իրականացման միջոցով և արդյունքում նախատեսվում է պատրաստել Մարզային Գյուղատնտեսական Զարգացման Ռազմավարություններ (ՄԳԶՌ), որոնց կիրառությունը թույլ կտա ուղղորդել մարզային իշխանություններին՝ նրանց գործողություններում, ինչպես նաև բարելավել մարզային և տեղական իշխանությունների պլանավորման և պլանավորված գործողությունների իրագործման կարողությունները:**

ՄԳԶՌ-ների ներքո անդրադարձ է կատարվել գյուղատնտեսության ոլորտի կայուն զարգացման հետևյալ կողմերին.

- Գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների կառավարման բարելավում և արդյունավետության բարձրացում,
- Տեղական և մարզային մակարդակներում նորարարական, եկամտաբեր, ճկուն, խելացի և դիմակայուն գյուղատնտեսության զարգացման քաղաքականության և մոտեցումների ընդունում և կիրառում,
- Բարձրարժեք մշակաբույսերի և նոր արժեշիջանների հայտնաբերում,
- Բարձրարժեք արտադրության մեջ նոր տնտեսվարողների, ֆերմերների և ներդրողների ներգրավում,
- Հանրության մեջ կրթության և տեղեկատվության փոխանակման գործընթացի բարելավում,
- Տեղական և արտահանման նոր շուկաների բացահայտում և ընդլայնում,
- Բնության պահպանության և կլիմայի փոփոխությանն առնչվող հարցեր, որոնք վերաբերվում են նաև գյուղատնտեսության ոլորտին:

## 1.2 ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### 1.2.1 Տվյալների հավաքագրումը

ՄԳԶՌ-ների պատրաստման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումն իրականացվել է հետևյալ մեթոդներով.

1. Փաստաթղթերի և երկրորդային տեղեկատվության ուսումնասիրություն: Ուսումնասիրվել է ՀՀ և Լոռու մարզի գյուղատնտեսության և հարակից այլ ոլորտների վերաբերյալ առկա տեղեկությունները՝ ներառյալ տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակված զեկույցներ, վիճակագրական տվյալներ և այլն:
2. Ինտենսիվ խմբային քննարկումներ մարզերի աշխատանքային խմբերի և այլ շահագրգիռ տեղեկացված անձանց և մասնագետների/փորձագետների հետ:
3. Դեմառդեմ անհատական քննարկումներ են իրականացվել մարզային և տեղական իշխանությունների ներկայացուցիչների, առաջատար ֆերմերների, զարգացման նախաձեռնություններ իրականացնող մասնագետների հետ:
4. Այցելություններ են իրականացվել մի շարք քննարկումների և տեղում ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված և նախապես ընտրված կայուն /

կանաչ գործելակերպ որդեգրած տնտեսություններ՝ մոդելային և կրկնօրինակելի գործարար գաղափարներ հայտնաբերելու և օժանդակելու նպատակով:

### **1.2.2 Տվյալների մշակումը և ամփոփումը**

Հավաքագրված տեղեկատվության և առանձին տվյալների մշակումն ու ամփոփումն իրականացվել է հետևյալ հիմնական մեթոդների կիրառմամբ.

1. Հավաքագրված տեղեկատվության համակարգում և դասակարգում :
2. Հավաքագրված և համակարգված տեղեկությունների և տվյալների ստուգում, հավաստում և տրիանգուլիացիա:
3. Տվյալների վերլուծություն և ամփոփում:

Իրականացված վերլուծության և ամփոփումների հիման վրա պատրաստվել է ՄԳՁՌ-ների բաղկացուցիչ մաս հանդիսացող 3 հիմնական հաշվետվություններ.

- 1) Մարզերի ընդհանուր գյուղատնտեսական նկարագրերը (արդեն ներկայացվել են):
- 2) Մարզերի ՄԳՁՌ-ները (արդեն ներկայացվել են):
- 3) Մարզերի ՄԳՁՌ-ների իրականացման գործունեության ծրագրերը (սույն փաստաթուղթը):

Հարկ է նշել, որ սույն փաստաթուղթը չի կրկնում մարզային իշխանությունների կողմից մարզի զարգացման ռազմավարության ներքո պատրաստվող ամենամյա գործունեության ծրագիրը, այլ լրացնում է նրան՝ դառնալով այդ ծրագրի անբաժանելի մասը:

## 2 ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈՎՁՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

### 2.1 ՀԱԿԻՐԸ ԱՆԴՐԱԴԱՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈՎՁՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

#### 2.1.1 Չարգացման տեսլական

Համաձայն «ՀՀ Լոռու մարզի 2017-2025թթ. Չարգացման ռազմավարության»՝ մարզի զարգացման տեսլականն է **ունենալ բազմաճյուղ զարգացած արդյունաբերություն, արդիականացված գյուղատնտեսություն, ՏՏ ոլորտ և զարգացած զբոսաշրջություն**: Ըստ այդմ, գյուղատնտեսության ոլորտում որպես մարզի զարգացման հիմնական գերակայություն է սահմանվել **ինտենսիվ գյուղատնտեսության զարգացումը**: 2022-2025 թվականների համար ՀՀ Լոռու մարզի գյուղատնտեսության զարգացման տեսլական է առաջարկվում հետևյալը՝ **ապահովել բարձրարժեք և մրցակցային գյուղատնտեսության ոլորտի կայուն և դիվերսիֆիկացված զարգացումը՝ ժամանակակից և նորարարական գործելակերպերի և տեխնոլոգիաների կիրառմամբ**:

Տեսլականն իրագործելու ճանապարհին նախատեսվում է հասնել հետևյալ միջանկյալ նպատակներին.

1. Կայուն/կանաչ գյուղատնտեսության զարգացում՝ առաջատար, աշխատասեր, տեղեկացված և կրթված ֆերմերների հետ երկարաժամկետ համագործակցության հաստատման և (արտաքին) ներդրումների ներգրավման միջոցով:
2. Արդյունաբերական գյուղատնտեսության զարգացում հողերի կոնսոլիդացման, դրանց արդյունավետ օգտագործման և ժամանակակից, նորարարական ու առաջավոր գյուղատնտեսական տեխնիկայի, մեխանիզացիայի և սարքավորումների պարկերի և ենթակառուցվածքների (սառնարանային պահեստ, վերամշակման և փաթեթավորման կարողություններ) ստեղծման, ժամանակակից ոլորտային լաբորատոր կարողությունների ձևավորման միջոցով:
3. Գյուղատնտեսության զարգացման պետական հասցեական օժանդակության (այդ թվում կայուն գյուղատնտեսության վարման ժամանակակից գործելակերպերի վերաբերյալ խորհրդատվության) համակարգում և արդյունավետության բարձրացում, մարզի համար հատուկ ծրագրերի մշակում և նախաձեռնում:
4. Կայուն/կանաչ գյուղատնտեսական գործելակերպերի (agricultural practice) ներդրում և առավելագույն տարածում, հիմնված գյուղացիական տնտեսությունների ավանդական գործողությունների փորձի, դրա կտրուկ բարելավման վրա: Հաջողված փորձի զանգվածային կրկնօրինակում:

#### 2.1.2 Գերակայելի ոլորտներ

Լոռու մարզի գյուղատնտեսության ոլորտում սահմանվել են հետևյալ գերակա ենթաօլորտները.

- Կարտոֆիլի մշակություն,
- Հացահատիկի մշակություն,
- Բանջարանոցային մշակաբույսերի մշակություն,
- Մեղվաբուծություն
- Անասնաբուծություն, հատկապես տավարաբուծություն:
- Հատապտուղների արտադրություն:

### 2.2 ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ 2022-2025ԹԹ.ՀԱՄԱՐ

Սահմանված ժամանակահատվածում ռազմավարական նպատակներին հասնելու լավագույն ճանապարհը բացահայտված խնդիրների հետևողական և համապարփակ հաղթահարումն է: Դա պետք է իրականացնել հավասարակշռված, ճիշտ հաջորդականությամբ, և

փոխհամաձայնեցված ձևով ու ժամկետում: Ստորև ներկայացվում են բացահայտված հիմնական խնդիրները և դրանց լուծման առաջարկվող քայլերը: Հարկ է նշել, որ լուծումները չեն սահմանափակվում միայն թվարկվածով: Ռազմավարության իրականացման ընթացքում և կախված տնտեսության և ոլորտի զարգացումներից, կարող են ի հայտ գալ և կիրառվել նոր լուծումներ:

**Աղյուսակ 1 – Լոռու մարզում գյուղատնտեսության ռազմավարական զարգացման խնդիրները և դրանց լուծման ուղղությունները**

Ոլորտներ	Ռազմավարական խնդիրներ	Լուծման ուղղություններ
Ընդհանուր խնդիրներ	<p>1. Զաղաքականություն իրականացնողների, խորհրդատվական ծառայություններ մատուցողների և գյուղացիական տնտեսությունների <b>տեղեկացվածության ցածր մակարդակը</b> և կայուն գյուղատնտեսական գործելակերպի վերաբերյալ նրանց <b>իրազեկման անբավարարությունը</b>:</p>	<p>1.1. Գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական և բարձրագույն կրթության բարելավում:                      1.2. ԳՏ խորհրդատվության մարզային համակարգի վերականգնում:                      1.3. Համայնքներում գյուղատնտեսի հաստիքի վերականգնում:                      1.4. Կայուն / կանաչ ԳՏ գործելակերպի վերաբերյալ իրազեկում:</p>
	<p>2. Ոռոգման համակարգի վատ վիճակը և սխալ/անարդյունավետ կառավարումը: Խնդիրը շարունակվում է նաև զգալի թվով գյուղացիական տնտեսությունների համար ոռոգման ջրի հասանելիության անբավարարությամբ և բացակայությամբ: Ոռոգման ներտնտեսային ցանցը ֆիզիկապես և բարոյապես մաշված է, ինչը հանգեցնում է ջրային ռեսուրսների կորստի:</p>	<p>2.1 Նոր ջրամբարների (այդ թվում փոքր և միջին) կառուցում և ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում, (ներառյալ անձրևաջրերի հավաքման և պահեստավորման գործելակերպերի ներդրում), ոռոգվող տարածքների ընդլայնում և ոռոգման համակարգի կառավարման արդյունավետության բարձրացում:                      2.2 Ժամանակակից արդյունավետ ոռոգման տեխնոլոգիաների (կաթիլային և անձրևացման համակարգերի) կիրառություն                      2.3 Ջրային ռեսուրսների, հատկապես բնական աղբյուրների, գնահատում և քարտեզագրում</p>
	<p>3. Արդյունավետ ներդրանքների՝ պարարտանյութերի, պայքարի միջոցների և սերմերի անբավարարությունն ու անմատչելիությունը:</p>	<p>3.1 Մատակարարների հետ կապերի ինտենսիվացում, մարզային ներկայացվածության ընդլայնում:                      3.2 Պետական օժանդակության ծրագրերի առաջմղում:                      3.3 Տնկարանային տնտեսությունների հիմնում:</p>
	<p>4. Գյուղատնտեսական տեխնիկայի, մեխանիզացիայի և սարքավորումների հնուկությունը, խիստ մաշվածությունը: Գյուղատնտեսական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ <b>ժամանակակից տեխնիկայի և սարքավորումների անբավարարությունը</b>: Ուղղակի բացասական ազդեցություն մշակության արդյունքների՝ բերքատվության և բերքի որակի վրա:</p>	<p>4.1 Գյուղատնտեսական տեխնիկայի նորացում: Պարկի համալրում բարձր արդյունավետություն ունեցող ժամանակակից տեխնիկայով:                      4.2 Նոր տեխնիկա, մեխանիզացիա և սարքավորումներ ձեռք բերելու ֆինանսական գործիքների մատչելիության բարձրացում և նոր գործիքների ներկայացում, նոր մատակարարների ներգրավում:                      4.3 Կայուն գյուղատնտեսության վարման տեսանկյունից ԳՏ տեխնիկայի պարկի թարմացում և համալրում, տնային տնտեսություններին դրանց հասանելիության ապահովում:</p>
	<p>5. Ժամանակակից գյուղատնտեսական տեխնոլոգիաների անբավարար կիրառությունը: Օրինակ՝ կաթիլային և անձրևացման եղանակով ոռոգումը, հակակարկտային ցանցերը, այլընտրանքային և վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումը, բարձր արդյունավետ ներդրանքների (inputs) կիրառությունը և այլն:</p>	<p>5.1 Թեմատիկ իրազեկման արշավների իրականացում, խորհրդատվության մատուցում:                      5.2 Պետական օժանդակության ծրագրերի առաջմղում:                      5.3 Ցուցադրական տնտեսությունների հիմնման օժանդակություն:</p>
	<p>6. Արտադրանքի պահեստավորման ենթակառուցվածքների (ներառյալ սառնարանային պահեստների) անբավարարությունն ու բացակայությունը: Առկա պահեստային ենթակառուցվածքներում արտադրանքի պահպանման ոչ</p>	<p>6.1 Մարզային և համայնքային նշանակության հետբերքահավաքային ենթակառուցվածքների՝ նոր ընդհանուր պահեստարանների, լոգիստիկ կենտրոնների և սառնարանային պահեստների</p>



	պատշաճ պայմանները, պահպանման ժամկետի անբավարարությունը, արդյունքում ուղղակի բացասական ազդեցություն բերքի որակի վրա:	կառուցում, ՊՄԳ մոդելի կիրառում: 6.2 Առկա ենթակառուցվածքների վերազինում՝ սննդամթերքի անվտանգության նորմերի և պահանջների պահպանմամբ:
	<b>7. Վերամշակման և փաթեթավորման ենթակառուցվածքների, մեծածախ գևորդների ու մթերումների անբավարարությունը:</b>	7.1 Մասնավոր ներդրումների և միջազգային ֆինանսական ծրագրերի ուղղորդում՝ մարզում անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման նպատակով 7.2 Տեղական առևտրային ցանցերին մարզի առանձնահատկությունների ներկայացում
	8. Գյուղատնտեսական գործունեության կառավարման և արտադրանքի շուկայավարման <b>գիտելիքի, փորձի և հմտությունների անբավարարությունը:</b> Ռազմավարական-հեռահար և տակտիկական - միջևաժամկետ պլանավորման բացակայությունը: Չնայած բազմաթիվ զարգացման կրթական ծրագրերին, սույն խնդիրը արդիական է:	8.1 Մեծահասակների կրթության մեթոդաբանությամբ ֆերմերների կրթման և կարողությունների զարգացման (ներառյալ բիզնես սկսելու և վարելու թեմայով) ծրագրերի շարունակական իրականացում:
	<b>9. Գյուղատնտեսական գործունեության ոչ գործարար մոտեցումները:</b>	9.1 Մեծահասակների կրթության մեթոդաբանությամբ ֆերմերների կրթման և կարողությունների զարգացման ծրագրերի շարունակական իրականացում:
	<b>10. Բարձրարժեք մշակաբույսերի վերաբերյալ տեղեկատվության, գիտելիքի, փորձի և հմտությունների անբավարարությունը:</b>	10.1 Մեծահասակների կրթության մեթոդաբանությամբ ֆերմերների կրթման և կարողությունների զարգացման ծրագրերի շարունակական իրականացում:
	<b>11. Կրծողների ու վնասատուների դեմ կենտրոնացված / համակարգված պայքարի բացակայությունը:</b>	11.1 Թեմատիկ իրազեկման արշավների իրականացում, խորհրդատվության մատուցում:
	<b>12. Ժամանակակից լաբորատոր կարողությունների բացակայությունը</b>	12.1 Մասնավոր ներդրումների և միջազգային ֆինանսական ծրագրերի ուղղորդում՝ մարզում անհրաժեշտ կարողությունների ձևավորման նպատակով
Բանջարանոցային մշակաբույսերի մշակության խնդիրները	<b>13. Մշակության ծավալների փոքրությունը: Հողերի փոքրությունը և մասնատվածությունը</b>	13.1 Կոոպերատիվների ստեղծում (խոցելի խմբերի՝ կանանց, երիտասարդների և այլն ներգրավմամբ) կամ կոոպերացիայի այլ միջոցառումների կիրառում՝ մասնակցություն չօգտագործվող հողատարածքների վերաբերյալ օրենսդրական կարգավորումների մշակմանը
Մեղվաբուծության խնդիրները	<b>14. Բույսերի պաշտպանության քիմիական միջոցների կիրառումը: Մեղունների հիվանդությունների կանխարգելման դժվարությունները:</b>	14.1 Մեծահասակների կրթության մեթոդաբանությամբ ֆերմերների կրթման և կարողությունների զարգացման ծրագրերի շարունակական իրականացում: 14.2 Թեմատիկ իրազեկման արշավների իրականացում, խորհրդատվության մատուցում:
	<b>15. Մասնագետների պակասը</b>	15.1 Ոլորտում մասնագիտական և բարձրագույն կրթության բարելավում: 15.2 Թեմատիկ խորհրդատվության մատուցում
	<b>16. Ծավալների փոքրությունը</b>	16.1 Արտադրողների և ֆերմերային տնտեսությունների կոնսոլիդացիա

ԽԵԿ բուժման խնդիրները	17. Անբավարար բուժման միջոցառումները:	<p>17.1 Պետական օժանդակության ծրագրերի առաջմղում:</p> <p>17.2 Գլխաքանակի թարմացում ցեղատեսակներով:</p> <p>17.3 Ժամանակակից տոհմային գործի ներդրում և իրականացում (ներառյալ կայուն և արդյունավետ կերարտադրության կազմակերպում):</p> <p>17.4 Թեմատիկ իրազեկման արշավների իրականացում, խորհրդատվության մատուցում:</p>
	18. Անբավարար բուժման միջոցառումները:	<p>18.1 Անասնաբույժների միության հետ համատեղ անասնաբույժների և անասնաբուծների կարիքների գնահատման և կարողությունների զարգացման շարունակական իրականացում:</p> <p>18.2 Բուժամիջոցների և կանխարգելիչ դեղամիջոցների մատակարարների մարզային ներկայացվածության ընդլայնում</p>
	19. Անբավարար կերարտադրություն	<p>19.1 Դաշտային կերարտադրության զարգացում:</p> <p>19.2 Արոտամարգագետնային կերարտադրության զարգացում:</p> <p>19.3 Բնական կերային հանդակների վերականգնում:</p> <p>19.4 Կանաչ կերերի հիդրոպոնիկ արտադրություն:</p>
Կայուն / Կանաչ գործելակերպի խնդիրները	20. Կայուն / Կանաչ գործելակերպի անբավարար կիրառում:	<p>20.1 Կրթական ծրագրի ներդրում ՀԱԱՀ-ում և մասնագիտական կրթական հաստատություններում:</p> <p>20.2 Թեմատիկ իրազեկման արշավների, նյութերի տրամադրում:</p> <p>20.3 Խորհրդատվության մատուցում:</p>

### **2.2.1 Պայմանական կլաստերային տարանջատում**

Մարզի գյուղատնտեսության ոլորտի գերակայությունները, ինչպես նաև դրանց զարգացման աշխարհագրական բաշխվածքը մեծապես կախված է տարբեր տարածաշրջանների և համայնքների (նույնիսկ՝ բնակավայրերի) բնակլիմայական (եղանակային) պայմաններից և ծովի մակարդակից ունեցած բարձրությունից: Միաժամանակ, այդ պայմանները լուրջ փոփոխությունների են ենթարկվել վերջին տարիներին արձանագրված կլիմայի փոփոխության պատճառով: Ավելին, ակնհայտ է, որ այդ փոփոխությունները շարունակվելու են ավելի մեծ թափով և լուրջ փոփոխությունների են հանգեցնելու նաև գյուղատնտեսության ոլորտում: Ինչևէ, հաշվի առնելով վերը նշվածը, հնարավոր է մարզի տարածքը պայմանականորեն բաժանել մասնագիտացած գոտիների՝ բուսաբուծական (ներառյալ՝ նույնիսկ այգեգործական) և անասնապահական կլաստերների:

Այսպես՝ հացահատիկի մշակությունը հիմնականում զարգացած է Տաշիրի, Ստեփանավանի և Սպիտակի տարածաշրջաններում, կարտոֆիլի մշակությունը՝ Ստեփանավանի և Սպիտակի տարածաշրջաններում, հատապտուղների մշակությունը տարածված է Թումանյանի և Գուգարքի տարածաշրջաններում, բանջարանոցային մշակաբույսերի մշակությունը տարածված է Սպիտակի և Թումանյանի տարածաշրջաններում, մեղվաբուծությունը՝ Սպիտակի, Գուգարքի և Թումանյանի տարածաշրջաններում, իսկ անասնապահությունը Տաշիրի տարածաշրջանում:

Գյուղատնտեսության ոլորտային նման բաշխվածությունը հնարավորություն է տալիս ստեղծել առանձին կլաստերներ ըստ տարածաշրջանների և ըստ ոլորտային առանձնահատկությունների: Ոռոգման համակարգերի վերակառուցման, վերագնահատման, քարտեզագրման և նորերի ստեղծման արդյունքում հնարավոր է նաև ինտենսիվ այգիների հիմնում և համապատասխան կլաստերների ձևավորում:

Մեկ անգամ ևս հարկ է նշել, որ ներկայացված բաշխվածքը պայմանական է: Գյուղատնտեսության վարման ներկայիս տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում լավագույնս զարգացնել տարբեր ենթաօլորտներ, որոնք նախկինում հնարավոր չի եղել դիտարկել բնակլիմայական պատճառներով: Հայաստանում շատ արագ զարգանում է պաշտպանված գրունտում կամ հիդրոպոնիկ եղանակով (ջերմատնային պայմաններում) տարբեր մշակաբույսերի մշակությունը, այդ թվում՝ քննարկվում է հատապտղի և նույնիսկ գաճաճ տեսակների պտղի այգիների մշակությունը: Նման զարգացումները կարող են շատ կարճ ժամանակահատվածում շեշտակի փոփոխել գործունեության տարբեր տեսակների ներկայացված տարածվածությունը:

### 3 ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022-2025ԹԹ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

#### 3.1 2022-2025ԹԹ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Մինչև մարզի գյուղատնտեսության ռազմավարական զարգացման 2022-2025թթ. գործունեության ծրագրի ներկայացումը անհրաժեշտ է կշռել, որ սույն փաստաթուղթը լրացնում է մարզային իշխանությունների կողմից յուրաքանչյուր տարի կանոնավոր կերպով պատրաստվող գործունեության ծրագրերին: Միաժամանակ, ծրագրերի և գործողությունների ընտրության, իրականացման և վերահսկողության այլ տրամաբանություն է որդեգրվել՝ հաշվի առնելով առկա օրենսդրական կարգավորումները: Առաջարկվել են այնպիսի գործողություններ, որոնց իրականացումը կարող է լիարժեքորեն ստանձնել մարզային իշխանությունը: Այլ կառույցների (ՀՀ ԷՆ, ֆինանսական հաստատություններ, մարզի համայնքներ, միջազգային և տեղական տարբեր ոչ պետական կազմակերպություններ և այլն) կողմից նախագծվող, ֆինանսավորվող, իրականացվող և վերահսկվող ծրագրերն ու գործողությունները չեն կարող իրապես դիտարկվել որպես մարզային իշխանությունների կողմից իրականացվող գործողություններ: Բացի այդ, ստորև ներկայացված գործունեության ծրագրում առանձնահատուկ անդրադարձ է կատարվել կայուն / կանաչ գյուղատնտեսական գործելակերպերին:

**Աղյուսակ 2 - Լոռու մարզի կայուն / կանաչ գյուղատնտեսության ռազմավարական զարգացման 2022-2025թթ. Գործունեության Ծրագիրը**

Ռազմավարական զարգացման խնդիրների լուծման ուղղություններ	Կոնկրետ գործողություններ	Վերջնարդյունքի ցուցանիշներ	Իրականացնող / Պատասխանատու	Գործընկերներ	Ֆինանսավորում (մոտավոր գնահատական)	Ժամկետ
1. Գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական և բարձրագույն կրթության բարելավում	1.1. Հարաբերությունների և համագործակցության հաստատում ՀԱԱՀ և մարզային մասնագիտական գյուղատնտեսական կրթության և խորհրդատվական հաստատությունների հետ, 1.2. Շուկայի պահանջարկի վրա հիմնված՝ կրթական ծրագրերի բարեփոխման և նոր ծրագրերի մշակման առաջարկությունների ներկայացում, 1.3. Իրազեկման օժանդակություն կրթական հաստատությունների ուսանողներով համալրման հարցում: 1.4. Առկա ռեսուրսների օգտագործում (Ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղ)	Ց.1.1 - Կայուն գործող համագործակցային առնվազն 1 հարթակի ստեղծում, հուշագրի ստորագրում  Ց.1.2 - Իրազեկման իրականացում մարզի առնվազն 400 երիտասարդների շրջանում  Ց.1.3 – Միջին-մասնագիտական հաստատությունների կողմից արտադրական-մասնագիտական պրակտիկաների կամ խորհրդատվության (հողի նմուշառում և անալիզի) կազմակերպում առնվազն 200 ուսանողների ներգրավմամբ	1. Մարզպետարան՝ ԿՄՍ և ՉՏԲ վարչություններ	1. Կրթական հաստատություններ 2. ՀՀ ԿԳՄՍՆ 3. ՀԿ-ներ 4. Հետազոտական կառույցներ 5. Ագրարային համալսարան	Ց1.1 և Ց 1.2 - 4,000,000 ՀՀ դրամ  Ց1.3 և Ց 1.4 - 8,000,000 ՀՀ դրամ	Ց1.1 - 31.12.2022թ.  Ց1.2 - 31.12.2025թ.  Ց1.3 - 31.12.2025թ.  Ց1.4 - 31.12.2025թ.

Ռազմավարական գարգացման խնդիրների լուծման ուղղություններ	Կոնկրետ գործողություններ	Վերջնարդյունքի ցուցանիշներ	Իրականացնող / Պատասխանատու	Գործընկերներ	Ֆինանսավորում (մոտավոր գնահատական)	Ժամկետ
		Ց.1.4 – Առնվազն 30 գյուղատնտեսների վերապատրաստում և որակավորում				
2. Գյուղատնտեսական խորհրդատվության մարզային համակարգի վերականգնում (պայմանական)	<p>2.1. Գնահատել մարզում գյուղատնտեսական խորհրդատվության մատուցման հնարավորությունները՝ մասնագիտական, կարողությունների, ենթակառուցվածքների և այլն:</p> <p>2.2. Մշակել գյուղատնտեսական խորհրդատվության մատուցման մարզի համար կիրառելի մոդել (վճարովի, կիսավճարովի կամ այլ): Հիմնավորել նման մոդելի իրագործելիությունը:</p> <p>2.3. Աշխատանքային քննարկումներ ունենալ ՀՀ ԷՆ, ֆինանսավորող միջազգային կազմակերպությունների, կրթական հաստատությունների հետ, սահմանել համագործակցության հնարավորությունները:</p> <p>2.4. Գյուղատնտեսական խորհրդատվության մարզային կառույցի կարողությունների զարգացում և համալրում:</p>	<p>Ց.2.1. - Իրականացված համապարփակ իրագործելիության հետազոտություն</p> <p>Ց.2.2. – Համալրված գյուղատնտեսական խորհրդատվության մարզային կառույց (ԳԽՄԿ):</p> <p>Ց.2.3. - Գյուղատնտեսական ծառայությունների հաջող մատուցման 100 դեպք (վճարովի խորհրդատվության, ազրոնոմիական ծառայության և այլն)</p>	<p>1. Մարզպետարան՝ զՏԲ վարչություն</p> <p>2. Գյուղատնտեսական և ծառայությունների ՊՈԱԿ</p>	<p>1. ՀՀ ԷՆ</p> <p>2. Միջազգային կազմակերպություններ (օրինակ՝ WB, EU, ADB, UNDP, FAO, IFAD, WFP, ADA, SDA) և զարգացման ծրագրեր</p> <p>3. ՀԿ-ներ և հիմնադրամներ</p> <p>4. Մարզային կրթական հաստատություններ</p> <p>5. Խորհրդատվական ընկերություններ</p>	<p>Ց.2.1. - 5,000,000 ՀՀ դրամ</p> <p>Ց.2.2. - 10,000,000 ՀՀ դրամ</p>	<p>Ց2.1 - 31.12.2022թ.</p> <p>Ց2.2. - 31.12.2023թ.</p> <p>Ց.2.3. 31.12.2025թ.</p>
3. Կայուն / կանաչ գյուղատնտեսական գործելակերպի վերաբերյալ իրազեկման շարունակական իրականացում	<p>3.1 Աշխատանքային խորհրդակցությունների անցկացում ներգրավված միջազգային կազմակերպությունների հետ և կարողությունների զարգացում</p> <p>3.2 Իրազեկման նյութերի ստացում</p> <p>3.3 Իրազեկման արշավի անցկացում մարզի բոլոր համայնքներում</p> <p>3.4 Դպրոցներում և կրթական հաստատություններում կայուն/կանաչ գյուղատնտեսական գործելակերպերի ներկայացում, ցուցադրական այգիների կառուցման խրախուսում</p>	<p>Ց.3.1. - Իրազեկման իրականացում մարզի խոշորացված համայնքներում, բնակավայրերի առնվազն կեսում</p> <p>Ց.3.2. – Կանաչ/կայուն գյուղատնտեսության վերաբերյալ արտադասարանական կրթության խրախուսում մարզի դպրոցների առնվազն 70%-ում</p>	<p>1. Մարզպետարան՝ զՏԲ և ԿՄՍ վարչություններ</p> <p>2. ԳԽՄԿ</p> <p>3. Մարզային հեռուստաընկերություն՝ ՖորտուՆա</p>	<p>1. ՀՀ ԷՆ</p> <p>2. ՀՀ ԿԳՄՍՆ</p> <p>3. Միջազգային կազմակերպություններ</p> <p>4. ՀԿ-ներ և հիմնադրամներ</p>	<p>Ց.3.1. և Ց.3.2 2,500,000 ՀՀ դրամ</p>	<p>Ց3.1. - Ց.3.2. - 31.12.2025թ.</p>
4. Նոր ջրամբարների (այդ թվում փոքր և միջին) կառուցում և ջրային ռեսուրսների արդյունավետ	<p>4.1 Մարզում ջրային ռեսուրսների գնահատում և արդյունավետ կառավարման մոդելի մշակում</p> <p>4.2 Ժամանակակից տիպային փոքր ջրամբարների մոդելի մշակում՝ ծավալի</p>	<p>Ց.4.1. Ջրային ռեսուրսների քարտեզագրում (քարտեզի թարմացում) և կառավարման մոդելի մշակում</p>	<p>1. ՀՀ ՏԿԵՆ և Ջրային Կոմիտե</p> <p>2. ՀՏԶՀ</p> <p>3. Մարզպետարան՝</p>	<p>1. Նախագծային կազմակերպություններ</p> <p>2. Միջազգային կազմակերպություններ</p>	<p>Ց.4.1. - 30,000,000 ՀՀ դրամ</p> <p>Ց.4.2. - 60,000,000 ՀՀ դրամ</p>	<p>Ց4.1.- 31.12.2022թ.</p> <p>Ց4.2.- 31.12.2025թ.</p>

Ռազմավարական գարգացման խնդիրների լուծման ուղղություններ	Կոնկրետ գործողություններ	Վերջնարդյունքի ցուցանիշներ	Իրականացնող / Պատասխանատու	Գործընկերներ	Ֆինանսավորում (մոտավոր գնահատական)	Ժամկետ
Կառավարում, (ներառյալ անձրևաջրերի հավաքման և պահեստավորման գործելակերպերի ներդրում), ոռոգվող տարածքների ընդլայնում և ոռոգման համակարգի կառավարման արդյունավետության բարձրացում:	<p>4.3 կառուցման տեխնոլոգիաների մակարդակի բարձրացումը</p> <p>4.4 Առնվազն 3 փոքր ջրամբարների կառուցման ծրագրի նախապատրաստում և ֆոնդահայթայթում</p> <p>4.4 Առնվազն 3 փոքր ջրամբարների կառուցում և շահագործում</p>	Ց.4.2. Կառուցված 3 ջրամբարներ	ԳՏԲ և քաղաքաշինության վարչություններ, հողաշինության բաժին և այլն	յուններ 3. Շինարարական ընկերություններ 4 ՀՀ պետական բյուջե (սուբվենցիոն ծրագրեր)	դրամ	
5. Ժամանակակից արդյունավետ ոռոգման տեխնոլոգիաների (կաթիլային և անձրևացման համակարգերի) կիրառություն:	<p>5.1 Կարողությունների գարգացման միջոցառումների պատրաստում և վճարովի մատուցում</p> <p>5.2 Պետական օժանդակության ծրագրերի առաջմղում</p>	Ց.5.1. Առնվազն 50 ֆերմերների կարողությունների գարգացում Ց.5.2. Առնվազն 3 ֆերմաներում առաջադեմ տեխնոլոգիաների ներդրում Ց.5.3. Առնվազն 25,000 մ <sup>2</sup> տարածքում առաջադեմ տեխնոլոգիաների ներդրում	1. Մարզպետարան՝ ԳՏԲ վարչություն 2. ԳԽՄԿ	1. ՀՀ ԷՆ 2. Ֆինանսական հաստատություններ 3. Մատակարարներ	Ց.5.1. – 2,500,000 ՀՀ դրամ Ց.5.2 և 5.3. - 35,000,000 ՀՀ դրամ	Ց.5.1.- 31.12.2025թ. Ց.5.2.- 31.12.2025թ. Ց.5.3.- 31.12.2025թ.
6. Արդյունավետ ներդրանքների (պարարտանյութեր և այլն) և կրծողների ու վնասատուների դեմ կենտրոնացված / համակարգված պայքարի միջոցների կիրառման խթանում	<p>6.1 Ներդրանքների մատակարարների գույքագրում, գնահատում և, մարզային ներկայացվածության օժանդակում</p> <p>6.2 Ֆերմերների համար կրծողների ու վնասատուների դեմ կենտրոնացված / համակարգված պայքարի միջոցների վերաբերյալ իրազեկման միջոցառումների անցկացում մարզի բնակավայրերի առնվազն 70%-ում</p>	Ց 6.1 Ներդրանքների մատակարարների ցանկ, առաջադեմ առնվազն 2 մատակարարի ներկայացվածություն մարզում Ց 6.2 Ֆերմերների համար իրազեկման միջոցառումների անցկացում մարզի բնակավայրերի առնվազն 70%-ում	1. Մարզպետարան՝ ԳՏԲ վարչություն 2. ԳԽՄԿ (պայմանական)	1. ՀՀ ԷՆ 2. Միջազգային կազմակերպություններ 3. ՀՀ-ներ և հիմնադրամներ	Ց 6.1 - Մինչև 2,000,000 ՀՀ դրամ Ց 6.2 - Մինչև 3,000,000 ՀՀ դրամ	Ց.6.1.- 31.12.2023թ. Ց.6.2- 31.12.2025թ.
7. Գյուղատնտեսական տեխնիկայի նորացում, ֆինանսական գործիքների մատչելիության բարձրացում և նոր գործիքների	<p>7.1 Կարիքների բացահայտում և գույքագրում</p> <p>7.2 Պետական օժանդակության ծրագրերի առաջմղում</p> <p>7.3 Առաջադեմ ֆերմերներին գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների հատկացման օժանդակություն</p>	Ց.7.1. Առնվազն 5 բնակավայրերում գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների հատկացումներ Ց.7.2. Առնվազն 15 միավոր տեխնիկայի և սարքավորումների հատկացում	1. Մարզպետարան՝ ԳՏԲ վարչություն 2. ՀՀ ԷՆ 3. ՀՏՀՀ (2-րդ)	1. Ֆինանսական հաստատություններ 2. Միջազգային կազմակերպություններ 3. Մատակարարներ	Ց.7.1. և Ց.7.2. - 150,000,000 ՀՀ դրամ	Ց.7.1.- 31.12.2025թ.

Ռազմավարական զարգացման խնդիրների լուծման ուղղություններ	Կոնկրետ գործողություններ	Վերջնարդյունքի ցուցանիշներ	Իրականացնող / Պատասխանատու	Գործընկերներ	Ֆինանսավորում (մոտավոր գնահատական)	Ժամկետ
Ներկայացում:			բաղադրիչ)	րարներ		
8. Մարզային և համայնքային նշանակության հետքերքահավաքային ենթակառուցվածքների կառուցում, ՊՍԳ մոդելի կիրառում	<p>8.1 Մարզային լոգիստիկ կենտրոնների հիմնման իրագործելիության հետազոտության անցկացում և մոդելի մշակում</p> <p>8.2 Լոգիստիկ ենթակառուցվածքների հիմնման նպատակով ֆոնդահայթայթում</p> <p>8.3 Մարզային և/կամ համայնքային առնվազն 1 լոգիստիկ ենթակառուցվածքի հիմնում</p> <p>8.4 Պետություն - Մասնավոր Գործընկերության (ՊՍԳ) մոդելով լոգիստիկ կենտրոնների շահագործում</p> <p>8.5 Տեղական առևտրային ցանցերի հետ հանդիպումների անցկացում, մարզի պոտենցիալ և հնարավորությունների ներկայացում</p>	<p>Ց.8.1. - Իրականացված համապարփակ իրագործելիության հետազոտություն</p> <p>Ց.8.2. Առնվազն 1 լոգիստիկ կենտրոնի շահագործում ՊՍԳ մոդելով</p> <p>Ց.8.3. Տարեկան առնվազն 1 տեղեկատվական հանդիպման կազմակերպում</p>	<p>1. Մարզպետարան՝ ԳՏԲ վարչություն</p> <p>2. Մարզի համայնքապետարաններ</p>	<p>1. ՀՀ ԷՆ</p> <p>2. Միջազգային կազմակերպություններ</p> <p>3. Համայնքային իշխանություններ</p> <p>4. Հետազոտական կազմակերպություններ</p>	<p>Ց.8.1. – 20,000,000 ՀՀ դրամ</p> <p>Ց.8.2. - 200,000,000 ՀՀ դրամ</p>	<p>Ց.8.1.- 31.12.2023թ.</p> <p>Ց.8.2.- 31.12.2025թ.</p> <p>Ց.8.3.- 31.12.2025թ.</p>
9. Ֆերմերների կրթում, գործարար կարողությունների զարգացում, ժամանակակից ԳՏ տեխնոլոգիաների վերաբերյալ իրազեկում, պետական օժանդակության ծրագրերի առաջմղում	<p>9.1 Գործարար կարողությունների զարգացման և կրթական միջոցառումների անցկացում մարզի բնակավայրերի առնվազն 70%-ում</p> <p>9.2 Ժամանակակից կայուն / կանաչ գյուղատնտեսական գործելակերպերի և տեխնոլոգիաների վերաբերյալ իրազեկման արշավների անցկացում մարզի բնակավայրերի առնվազն 70%-ում</p> <p>9.3 Պետական օժանդակության ծրագրերի առաջմղում մարզի բնակավայրերի առնվազն 70%-ում</p>	<p>Ց.9.1. Կրթական և իրազեկման միջոցառումների անցկացում մարզի բնակավայրերի առնվազն 70%-ում</p>	<p>1. Մարզպետարան՝ ԳՏԲ վարչություն</p> <p>2. ԳԽՄԿ (պայմանական)</p> <p>3. Ագրարային համալսարան</p>	<p>1. ՀՀ ԷՆ</p> <p>2. Միջազգային կազմակերպություններ</p> <p>3. ԿԳՄՆ</p>	<p>Ց.9.1 - 20,000,000 ՀՀ դրամ</p>	<p>Ց.9.1.- 31.12.2025թ.</p>
10. Գյուղատնտեսական ժամանակակից լաբորատոր կարողությունների ձևավորում	<p>10.1 Մարզում առկա լաբորատոր կարողությունների գնահատում, գույքագրում, կարիքների վերհանում</p> <p>10.2 Միջազգային կազմակերպությունների և մասնագետների հետ խորհրդակցությունների անցկացում</p> <p>10.3 Ժամանակակից լաբորատոր սարքավորումների ձեռքբերման</p>	<p>Ց.10.1. Լաբորատոր կարողությունների և կարիքների ցանկ</p> <p>Ց.10.2. Դուրսբերված ցանկի առնվազն 30% սարքավորումների ձեռքբերման ապահովում</p>	<p>1. Մարզպետարան՝ ԳՏԲ վարչություն</p> <p>2. Ագրարային համալսարան</p>	<p>1. ՀՀ ԷՆ</p> <p>2. Միջազգային կազմակերպություններ</p> <p>3 ՀԿ-ներ և հիմնադրամներ</p> <p>4 Հետազոտական կազմակերպություններ</p>	<p>Ց.10.1. և Ց.10.2. - 50,000,000 ՀՀ դրամ</p>	<p>Ց.10.1.- 31.12.2022թ.</p> <p>Ց.10.1.- 31.12.2025թ.</p>

Ռազմավարական զարգացման խնդիրների լուծման ուղղություններ	Կոնկրետ գործողություններ	Վերջնարդյունքի ցուցանիշներ	Իրականացնող / Պատասխանատու	Գործընկերներ	Ֆինանսավորում (մոտավոր գնահատական)	Ժամկետ		
	կազմակերպում			յուններ				
11. Ցուցադրական տնտեսությունների հիմնման օժանդակություն	<p>11.1 Մարզի գյուղատնտեսության զարգացման գերակայելի ենթաօլորտներում ցուցադրական տնտեսությունների հիմնման իրագործելիության հետազոտության անցկացում և ներդրումային ծրագրի/ծրագրերի պատրաստում</p> <p>11.2 Ցուցադրական տնտեսությունների հիմնման նպատակով ֆոնդահայթայթում</p> <p>11.3 Ցուցադրական առնվազն 5 տնտեսությունների հիմնում և կայուն / կանաչ շահագործում/կիրառում</p>	Ց.11.1. Ցուցադրական առնվազն 5 տնտեսությունների հիմնում	<p>1. Մարզպետարան՝ ԳՏԲ վարչություն</p> <p>2. ԳԽՄԿ (պայմանական)</p>	<p>1. ՀՀ ԷՆ</p> <p>2. Միջազգային կազմակերպություններ</p> <p>3 ՀԿ-ներ և հիմնադրամներ</p> <p>4 Հետազոտական կազմակերպություններ</p>	Ց.11.1. - 70,000,000 ՀՀ դրամ	Ց.11.1.- 31.12.2024թ.		
12. Կենդանիների գլխաքանակի թարմացում, տոհմային գործի խթանում	<p>12.1 Ֆերմերների կարողությունների զարգացման և իրազեկման բարձրացման միջոցառումների անցկացում մարզի բնակավայրերի առնվազն 70%-ում</p> <p>12.2 Անասնաբույժների կարողությունների զարգացման և իրազեկման բարձրացման միջոցառումների անցկացում մարզի բնակավայրերի առնվազն 70%-ում</p> <p>12.3 Կենդանիների գլխաքանակի թարմացման ծրագրերի պատրաստում և իրականացում</p> <p>12.4 Կենդանիների տոհմային գործի խթանման ծրագրերի պատրաստում և իրականացում</p>	<p>Ց.12.1. Ֆերմերների համար կրթական և իրազեկման միջոցառումների անցկացում մարզի բնակավայրերի առնվազն 70%-ում</p> <p>Ց.12.2. Անասնաբույժների համար կրթական և իրազեկման միջոցառումների անցկացում մարզի բնակավայրերի առնվազն 70%-ում</p> <p>Ց.12.3. Կենդանիների գլխաքանակի թարմացման և տոհմային գործի խթանման ծրագրերի մշակում</p> <p>Ց.12.4. Առնվազն 500 գլուխ խԵԿ</p> <p>Ց.12.5. Կենդանիների հատկանիշների և արտադրողականության առնվազն 10% բարելավում</p>	<p>1. Մարզպետարան՝ ԳՏԲ վարչություն</p> <p>2. ԳԽՄԿ (պայմանական)</p>	<p>1. ՀՀ ԷՆ</p> <p>2. Միջազգային կազմակերպություններ</p> <p>3. Անասնաբույժների միություն</p> <p>4. ՀԿ-ներ և հիմնադրամներ՝ ԶԱԴ, ՌԶԳ և այլն</p>	<p>Ց.12.1- Ց.12.3. 20,000,000 ՀՀ դրամ</p> <p>Ց.12.4. – 250,000,000 ՀՀ դրամ</p>	<p>Ց.12.1.- 31.12.2025թ.</p> <p>Ց.12.2- 31.12.2025թ.</p> <p>Ց.12.3.- 31.12.2022թ.</p> <p>Ց.12.4.- 31.12.2025թ.</p> <p>Ց.12.5.- 31.12.2025թ.</p>		
13. Մեղուների թվաքանակի և հիվանդությունների վերահսկում և բարելավում	13.1 Մեղվաբույժների կարողությունների զարգացման և իրազեկման բարձրացման միջոցառումների անցկացում՝ ներգրավելով առնվազն 50%-ին	Ց.13.1. մեղվաբույժների համար կրթական և իրազեկման միջոցառումների անցկացում ներգրավելով առնվազն 50%-ին	Ց.13.2. Նոր տեխնոլոգիաների,	1. Մարզպետարան՝ ԳՏԲ և ԿՄՍ վարչություն	1. ՀՀ ԷՆ	2. Միջազգային կազմակերպություններ	Ց.13.1. և Ց.13.2. - 8,000,000 ՀՀ դրամ	Ց.13.1.- 31.12.2025թ.



Ռազմավարական գարգացման խնդիրների լուծման ուղղություններ	Կոնկրետ գործողություններ	Վերջնարդյունքի ցուցանիշներ	Իրականացնող / Պատասխանատու	Գործընկերներ	Ֆինանսավորում (մոտավոր գնահատական)	Ժամկետ
	13.2Նոր տեխնոլոգիաների, կերակրման և բուժման մեթոդների, թունաքիմիկատների և դեղամիջոցների կիրառման սահմանափակման անհրաժեշտության վերաբերյալ իրազեկման նյութերի ստացում և իրազեկման արշավների անցկացում մարզի բոլոր համայնքներում 13.3Ոլորտում կրթական հաստատությունների և մասնագիտական կառույցների հետ կապերի հաստատում	բուժման միջոցների և այլ միջոցառումների վերաբերյալ իրազեկման արշավների իրականացում բոլոր համայնքներում Ց.13.3. Կրթական հաստատությունների և մասնագիտական կառույցների հետ առնվազն 2 միջոցառման անցկացում		հաստատություններ 4. ՀՀ-ներ և հիմնադրամներ 5. Մեղվաբույծների ասոցացիա (մարզային)	Ց.13.3. – 2,000,000 ՀՀ դրամ	Ց.13.3.- 31.12.2025թ.
14. Կերարտադրության և խթանում	14.1Դաշտային կերարտադրության զարգացում 14.2Արտամարզագետնային կերարտադրության զարգացում 14.3Բնական կերային հանդակների վերականգնում 14.4Կանաչ կերերի հիդրոպոնիկ արտադրություն	Ց14.3. Վերականգնված կերահանդակ 20 հա Ց14.4. Կանաչ կերերի արտադրության հիդրոպոնիկ ջերմոցի հիմնում	1. Մարզպետարան՝ ԳՏԲ և ԿՄՍ վարչություն 2. Մասնավոր ֆերմերային տնտեսություններ	1. ՀՀ ԷՆ 2. Միջազգային կազմակերպություններ	Ց14.3. 20,000,000 ՀՀ դրամ Ց14.4. 17,000,000 ՀՀ դրամ	Ց14.3. 31.12.2025 Ց14.4. 31.12.2023

### 3.2 2022-2025թթ. Գործուբեռնության Ծրագրի Կոնկրետ Գործողությունների Ծրագրի Կոնկրետ Գործողությունների և միջոցառումների ակնառու ներկայացման նպատակով

Վերը ներկայացված Գործունեության Ծրագրի կոնկրետ գործողությունների և միջոցառումների ակնառու ներկայացման նպատակով գյուղատնտեսության զարգացման մարզային ռազմավարության պատրաստման գործընթացում ընտրվել և ուսումնասիրվել են մի քանի մոդելային ներդրումային ենթածրագրեր: Այդ ենթածրագրերը միտված են գյուղատնտեսության ոլորտում բացահայտված խնդիրների լուծմանը, գերակայելի սահմանված ոլորտների զարգացմանը, կայուն / կանաչ գյուղատնտեսական գործելակերպերի առաջնորմանը և ընդհանուր զարգացմանը: Ներկայացված ծրագրերից որոշները, որոնք առավել տիպիկ են կայուն / կանաչ գյուղատնտեսական գործելակերպի առումով, առանձնացվել են ԵՄ կողմից ֆինանսավորվող և Ավստրիայի Չարգացման Գործակալության կողմից իրականացվող «Հայաստանում Կանաչ Գյուղատնտեսության Նախաձեռնության» Ծրագրի շրջանակներում մասնակի օժանդակություն հատկացնելու նպատակով: Բոլոր ենթածրագրերի իրականացման ներդրումներում նախատեսվում է իրականացնող / շահառու մասնավոր գործընկերների, և/կամ համայնքային / պետական ծրագրերի, և/կամ այլ զարգացման նախաձեռնությունների և հնարավոր այլ կառույցների կողմից հատկացվող համաֆինանսավորում: Բոլոր ենթածրագրերը նախընտրվել են իրենց օրինակելի լինելու, զարգացման և կրկնօրինակման ներուժի, կայուն / կանաչ գյուղատնտեսական գործելակերպի վերաբերյալ գիտելիքի և կարողությունների դրսևորման և փոխանցման հնարավորության համար: Ստորև ներկայացված են նախընտրված և ուսումնասիրված հիմնական օրինակելի և մոդելային ենթածրագրերը:

**Աղյուսակ 3 - Մոդելային և օրինակելի ենթածրագրերի օրինակներ**

Ռազմավարական գարգացման ենթաօլորտ և ուղղություն	Տեսնսվարող	Ենթածրագրի հակիրճ նկարագրություն	Ընդհանուր բյուջե	Սեփական ներդրում	Գործընկերներ	Իրականացման տարի
Հացահատիկի, հատիկընդեղենի, կարտոֆիլի, արտադրություն	<p><b>Սամվել Լամբարյան</b></p> <p>Փոքր ջրավազանի կառուցում, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում</p>	<p><b>Նկարագրություն</b></p> <p>Սամվել Լամբարյանը հողագործությամբ զբաղվում է 1999 թվականից: Լոռու մարզի Սպիտակ համայնքում ունի 50հա հողատարածք: Նախատեսում է ունենալ լոբու, կանաչ ոլոռի, կարտոֆիլի, ցորենի ցանքատարածություններ՝ յուրաքանչյուր տարի ապահովելով ցանքաշրջանառություն: Ցանքաշրջանառության ապահովումը հնարավորություն կտա բերքատվության բարձրացմանը օգտագործելով լոբազգիների հողը հարստացնելու ունակությունը, որը կբերի պարարտանյութերի քիչ օգտագործմանը: Ցորենից ստացված ծղոտը նախատեսվում է օգտագործել բիո պարարտանյութեր ստանալու համար: Ստացված բիո պարարտանյութը նպատակահարմար է և Էկոլոգիապես մաքուր սնունդ ստանալու և ցածր ինքնարժեքով պարարտանյութ ունենալու համար, քանի որ հումքը սեփական է:</p> <p>Ցանքատարածությունները ոռոգման ջրով ապահովելու նպատակով նախատեսում է օգտագործել լժված 500-600մ հեռավորության վրա գտնվող արտեզյան հորը: Այդ նպատակով նախատեսում է ջրհորում տեղադրել Էներգախնայող խորքային պոմպ և ջրի մաքրման կայան՝ դրանց շահագործման համար՝ կառուցելով և օգտագործելով արևային ֆոտովոլտային կայան: Նախատեսվում է ջուրը խողովակաշարով բարձրացնել 500-600մ հողի ամենաբարձր կետ, այնտեղ կառուցել ջրավազան հողաթաղանթային եղանակով, որտեղից կաթիլային ու անձրևացման եղանակով կապահովվի ցանքատարածությունների ոռոգումը: Արտեզյան ջրով ոռոգումը հնարավորություն կտա ապահովել Էկոլոգիապես մաքուր սնունդ ստանալու և մեկ բաղադրիչ՝ մաքուր ջրով ոռոգում: Արտադրանքի իրացման հիմնական շուկան մեծածախ գնորդներն են, որոնք իրացնում են արտադրանքը ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում:</p> <p><b>Նախատեսվող աշխատանքները</b></p> <p>Արտադրական գործունեությունը բարելավելու նպատակով նախատեսվում են հետևյալ աշխատանքները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Արևային ֆոտովոլտային կայան՝ 54վտ/ժամ դրվածքային հզորությամբ, տեղադրում</li> <li>• Էներգախնայող խորքային պոմպի ձեռք բերում</li> <li>• Ջրի ֆիլտրացիոն կայանի տեղադրում</li> <li>• Ոռոգման համակարգի մայր ջրագծի կառուցում</li> <li>• Ոռոգման համակարգի երկրորդական գծերի և կցամասերի կառուցում</li> <li>• Գեոմեմբրանային ջրավազանի կառուցում</li> <li>• Կաթիլային և անձրևացնող ոռոգման համակարգի տեղադրում</li> </ul> <p>Հետագայում, արդյունավետ բերքատվություն ունենալու համար անհրաժեշտ կլինի հակակարտային ցանցերի տեղադրում, լոբի հավաքող միսի կոմբայնի ձեռքբերում, հատիկընդեղենի մաքրման և զտման սարքեր:</p>	61,500,000 ՀՀ դրամ	47%	<ol style="list-style-type: none"> <li>1. ԵՄ «Կանաչ Գյուղատնտեսության Նախաձեռնության» Ծրագիր</li> <li>2. ՀՀ ԷՆ (Գյուղատնտեսության օժանդակության պետական ծրագիր՝ ԳՕՊԾ)</li> <li>3. Ֆինանսական հաստատություններ</li> </ol>	2022թ.- 2025թթ.

Ռազմավարական զարգացման ենթաոլորտ և ուղղություն	Տեստեսվարող	Ենթաժրագրի հակիրճ նկարագրություն	Ընդհանուր բյուջե	Սեփական ներդրում	Գործընկերներ	Իրականացման տարի
		<p><b>Ներդրման արժեքը</b> Ձրհորից ջրի տեղափոխման և ոռոգման համակարգի տեղադրման ծախսերը՝ մշակաբույսերի մշակության հետ միասին կկազմեն մոտ 61,500,000 ՀՀ դրամ:</p> <p><b>Կարևորությունը մարզի համար</b> Գյուղատնտեսությամբ զբաղվելը ենթադրում է ոչ միայն մշակաբույսերի մշակություն, այլև համապատասխան ռեսուրսների (հող, ջուր, էներգիա և այլն) արդյունավետ օգտագործում: Արևային ֆոտովոլտային կայանի և ոռոգման նպատակով փոքր ջրավազանի կառուցումը, կաթիլային կամ անձրևացման եղանակով ոռոգման իրականացումը, մշակաբույսերի ցանքաշրջանառության կազմակերպումը (այդ թվում հատիկընդունի կիրառմամբ) այս ծրագիրը դարձնում են օրինակելի մարզի գյուղատնտեսության զարգացման համար: Այս ծրագիրն ապահովում է նաև ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և կարող է կիրառվել այլ տնտեսությունների կողմից: Այն օրինակ կարող ա հանդիսանալ այլ գործարարների համար և խթանել մարզում կանաչ/կայուն գյուղատնտեսության զարգացմանը:</p>				
Կանաչ կերի և բիոգազի արտադրություն, շրջակա միջավայրի աղտոտման կրճատում	<p><b>Վարդան Շաքարյան ԱԶ</b></p> <p>Հիդրոպոնիկ եղանակով կանաչ զանգվածի և գոմաղբից կենսագազի արտադրություն</p>	<p><b>Նկարագրություն</b> Վարդան Շաքարյանը նախատեսում է Լոռու մարզի Վանաձոր քաղաքում կազմակերպելով ինտենսիվ անասնապահություն՝ ներկրելով բարձրակ կաթնատու 60 խոշոր եղջերավոր կենդանիներ: Անասնագոմի շինարարական աշխատանքներն արդեն սկսել են և 2021 թվականի ընթացքում ակնկալվում է ամբողջական գործարկում: Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտություն է առաջանալու կենդանիներին ապահովել անհրաժեշտ անասնակերով: Միաժամանակ գործունեության իրականացման արդյունքում գեներացվելու է մեծ քանակի գոմաղբ, որը կուտակվելու է դրա համար ստեղծված հատուկ կառույցում:</p> <p><b>Նախատեսվող աշխատանքները</b> Նախատեսված անասնակերի անընդհատությունն ապահովելու համար նախատեսվում է տեղում ապահովել հիդրոպոնիկ եղանակով կանաչ զանգվածի արտադրություն, որն առնվազն կիսով չափ կապահովի ագրոհամալիրի անասնակերի պահանջարկը: Ջերմոցային տարբերակով կանաչ զանգվածի արտադրության համար նախատեսվում է կառուցել 190-200քմ մակերեսով ջերմոց և կենսագազի արտադրություն՝ նախատեսված 60 կովի գոմաղբի վերամշակման հզորությամբ: Կենսագազի արտադրության արդյունքում առաջացած կենսագազը (մոտ 109.000իսմ ծավալով 5 տարվա ընթացքում) կօգտագործվի կանաչ զանգվածի ջերմոցի ջեռուցման համար, իսկ գազի տարանջատումից մնացած զանգվածը հանդիսանում է բարձրակարգ օրգանական պարտանյութ (մոտ 182,000կգ 5 տարվա ընթացքում) և մեծ պահանջարկ ունի գյուղատնտեսության մեջ: Ըստ նախնական հաշվարկների ակնկալվում է հինգ տարվա ընթացքում ստանալ</p>	36,500,000 ՀՀ դրամ	50%	1. ԵՄ «Կանաչ Գյուղատնտեսության Նախաձեռնության» Ծրագիր	2022-2023թթ.

Ռազմավարական զարգացման ենթաօլորտ և ուղղություն	Տեստավարող	Ենթածրագրի հակիրճ նկարագրություն	Ընդհանուր բյուջե	Սեփական ներդրում	Գործընկերներ	Իրականացման տարի
		<p>մոտ 2000-3000 տոննա կանաչ զանգված: Ծրագրի արդյունքում Լոռու մարզում ֆերմերային տնտեսություններին կառաջարկվի որակյալ կանաչ անասնակեր անկախ սեզոնայնությունից բարձր կաթնատվություն ասպահովելու համար: Ագրոհամալիրում կբացվի նաև 6 աշխատատեղ:</p> <p><b>Ներդրման արժեքը</b> Ենթածրագրի ընդհանուր արժեքը կազմում է մոտ Է 36,500,000 ՀՀ դրամ,որից 17,000,000 ՀՀ դրամը կանաչ զանգվածի համար նախատեսված ջերմոցի և մնացած պարագաների կառուցման և ձեռքբերման համար,իսկ 15,500,000 ՀՀ դրամը՝ կենսագազի կայանի կառուցման համար, 4 մլն. դրամ՝ անձրևաջրերի հավաքման մեխանիզմի համար :</p> <p>5 տարվա կտրվածքով ակնկալվող շահույթի հաշվարկում նախատեսվել է կանաչ զանգվածի /միջինացված 2500 տոննա/ վաճառք՝ 1 կգ-ը 45 դրամով և կենսագազի արտադրությունից ստացված պարատանյութը՝ /182 տոննա/ 1 կգ-100 դրամ: Ներդրումների հետզնման ժամկետը՝ մոտ 3 - 4 տարի: Ծրագիրն ունի կարևորագույն գյուղատնտեսական, սոցիալական և բնապահպանական ազդեցություն:</p> <p><b>Կարևորությունը մարզի համար</b> Տավարաբուծությունը համարվում է մարզի ռազմավարական ուղղություններից մեկը: Սակայն միաժամանակ մարզում առկա է արոտավայրերի կառավարման խնդիր: Այս նախաձեռնությունը մարզում կանաչ կերի արտադրության այլընտրանքային տարբերակներից է, ինչը հնարավորություն է տալիս քաղաքային պայմաններում, նորարական մոտեցումներով մշտապես ունենալ անհրաժեշտ կանաչ զանգված: Իսկ գոմաղբը բիոգազի վերածելը իրենից ներկայացնում է օդի աղտոտման դեմ պայքարի և ջերմոցի ջեռուցման օրինակ: Այս նախաձեռնությունը մարզում կանաչ/կայուն գյուղատնտեսության խթանման օրինակներից է:</p>				
Հատիկընդեղենի մշակություն և վերամշակում	«Սիմ Ագրո» գյուղատնտեսական կոոպերատիվ	<p><b>Նկարագրություն</b> «ՍԻՄ ԱԳՐՈ» գյուղատնտեսական կոոպերատիվը հիմնադրվել է 2020 թվականին Ալավերդու Ակներ գյուղում: Կոոպերատիվը իր գործունեությունը սկսել է 3 հա վարելահողի վրա ընդլայնելով գործունեության ծավալները մինչև 6 հա: Կոոպերատիվի հաջողության գրավականը նաև ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումն է, որի արդյունքում գործունեության ծավալները անընդհատ ընդլայնվում են: Այժմ մշակվում է շուրջ տասնմեկ տեսակի մշակաբույս՝ լոբի, ոլոռ, կարտոֆիլ, բիբար, ծիծակ, բրոկոլի, լոլիկ, վարունգ, ֆիզալիս, սմբուկ, բազուկ: 2021 թ.-ին տարեկան բերքի ծավալները կազմել են՝ կարտոֆիլ-7 տ, ոլոռ-700 կգ, լոբի-400 կգ, լոլիկ-800 կգ, բիբար-300 կգ, ծիծակ-350 կգ, բրոկոլի-50 կգ, վարունգ-200 կգ, ֆիզալիս- 120 կգ, սմբուկ-50 կգ, բազուկ-40 կգ: Հատկանշական է ոլոռի և ֆիզալիսի մշակությունը:</p>	4,500,000 ՀՀ դրամ	11%	1. ՀՀ ԷՆ ՉՕՊԾ 2. Միջազգային կազմակերպություններ և ծրագրեր 3. Ֆինանսական հաստատություններ	2022թ. կամ 2023թ.

Ռազմավարական գարգացման ենթադրույթ և ուղղություն	Տեստավարող	Ենթաճրագրի հակիրճ նկարագրություն	Ընդհանուր բյուջե	Սեփական ներդրում	Գործընկերներ	Իրականացման տարի
		<p>Ընկերությունը 2021 թվականից փորձնական զբաղվում է նաև իր մշակաբույսերի պահածոյացմամբ: Ներկայումս փորձնական արտադրվում է ավելի քան տասներեք տեսակ պահածո: Կոոպերատիվը տրամադրում է նաև անվճար խորհրդատվություն գյուղացիներին, իրենց կողմից մշակվող մշակաբույսերի վերաբերյալ:</p> <p><b>Նախատեսվող աշխատանքները</b> Կազմակերպությունը ծրագրում է կառուցել պահածոների գործարան: Նախատեսվում է գործարանում պահածոյացնել ոչ միայն կոոպերատիվի արտադրած մշակաբույսերը, այլ նաև պայմանագրեր կնքել գյուղացիների հետ, որպեսզի իրենք մշակեն իրենց անմշակ վարելահողերը վստահ լինելով, որ իրենց բերքը ընդունվելու է գործարանի կողմից: Սակայն մինչև այժմ հատիկընդունի ցանքսը և բերքահավաքը իրականացվել է ձեռքի աշխատանքով, քանի որ գյուղում և հարակից տարածաշրջանում չկա շարքացան, իսկ հողի կուլտիվացիան իրականացվում է ձեռքի մոտոբլոկով: Ձեռքով ցանքս և բերքահավաք իրականացնելը շատ ծախսատար և ժամանակատար է, ինչի պատճառով գյուղացիները չեն ցանկանում զբաղվել հողագործությամբ: Գործունեությունն արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է նաև ունիվերսալ շարքացան և հողաֆրեզ, որպեսզի գյուղացին կարողանա արագ իրականացնել հողի փխրեցումը հողաֆրեզով, այնուհետև ունիվերսալ շարքացանով իրականացնել ցանքս արդեն մեծ հողամասերի վրա, որից հետո մինի կոմբայնով հավաքել բերքը և հանձնել պահածոների գործարան: Մինչ այժմ կոոպերատիվի գյուղատեխնիկական գյուղացիների համար աշխատել է կես գնով, սարքավորումների ձեռք բերման դեպքում այն նույնպես կաշխատի կես գնով, որպեսզի գյուղացու ծախսերը մեծ չլինի: Գործարանի գործարկումը և այս սարքավորումների առկայությունը հնարավորություն կտա Ալավերդու տարածաշրջանի 300 հա-ից առնվազն 30% վարելահողերը մշակել:</p> <p><b>Ներդրման արժեքը</b> Ներդրումների պայմանական մոտավոր գումարը կազմում է 4,500,000 ՀՀ դրամ 1,100,000 ՀՀ դրամ մինի հողաֆրեզի և 3,500,000 ՀՀ դրամ ունիվերսալ շարքացանի համար:</p> <p><b>Կարևորությունը մարզի համար</b> Ծրագիրն ունի և սոցիալական, և գյուղատնտեսական նշանակություն մարզի համար: Շարքացանի և հողաֆրեզի ձեռքբերումը հնարավորություն կտա մշակել ոչ միայն Ակներ գյուղի, այլ նաև հարակից՝ Հաղպատ և Սանահին գյուղերի վարելահողերը՝ հողի վերականգնման համար այդքան անհրաժեշտ հատիկընդունով: Իսկ գործարանի առկայությունը կապահովի վարելահողերում մշակված բերքի մթերումը: Գործարանի ստեղծումը և համեմատաբար ցածր ծախսերով վարելահողերի մշակությունը (հողաֆրեզի և շարքացանի առկայության</p>				

Ռազմավարական գարգացման ենթադրույթ և ուղղություն	Տեստավարող	Ենթաճրագրի հակիրճ նկարագրություն	Ընդհանուր բյուջե	Սեփական ներդրում	Գործընկերներ	Իրականացման տարի
		դեպքում) նշված գյուղերի բնակիչներին հնարավորություն կտա գումար վաստակել իրենց հողից և չարտագաղթել:				
Ինտենսիվ գյուղատնտեսությու	Տաշիր համայնք	<p><b>Նկարագրություն</b> Տաշիր համայնքը կազմված է 12 բնակավայրերից: Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և գյուղատնտեսությամբ: Համայնքում գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են՝ 16 579.65 հա, որից՝ 4346.94 հա վարելահող, 4330.23 հա խոտհարք, 6735.51 հա արոտ, այլ հողեր 1161.57 հա, բազմամյա տնկիներ 5.1 հա: Այդ հողերի որոշ մասն այսօր մշակվում են, սակայն հողամասի մակերես-ներդրված ռեսուրսներ-արդյունավետություն-շահութաբերություն համատեքստում դիտարկելիս կարելի է նկատել, որ բնակիչների մեծամասնությունը չի ստանում սեփական կարիքները հոգալու համար բավարար շահույթ այդ գյուղատնտեսական գործունեությունից: Արդյունքում շատերը հիասթափվում են, և առաջ է գալիս այն միտքը, որ գյուղատնտեսությունը շահութաբեր զբաղմունք չէ, և շատերը խուսափում են դրանով զբաղվելուց: Ուսումնասիրելով բնակիչներից շատերի փորձը՝ ցանկանում ենք առանձնացնել մի կարևոր հիմնահարց. գյուղատնտեսներից շատերը դեռևս մշակում են իրենց հողերն ավանդական՝ «պապական» մեթոդաբանությամբ՝ համարելով դա միակ ճիշտ տարբերակը: Սակայն այսօր ամբողջ աշխարհում գյուղատնտեսության ոլորտում տեղի են ունենում բազմաթիվ նորարարություններ, ներդրվում են այն արդյունավետորեն իրականացնելու տեխնոլոգիաներ և մեթոդներ (կանաչ, օրգանական գյուղատնտեսություն, ոռոգման նորարարական համակարգեր և այլն), որոնցից, սակայն, մեր համայնքի բնակիչների մեծամասնությունը տեղեկացված չէ: Մյուս կարևոր խնդիրներից մեկը վերոնշյալ նորարարական մեթոդաբանությամբ աշխատող գյուղատնտեսական բիզնեսների բացակայությունն է համայնքում, որոնք կարող էին լրացուցիչ խթան հանդիսանալ մնացած բնակիչների համար՝ նվազեցնելով նոր բան սկսելու և դրա արդյունավետության նկատմամբ առկա վախերն ու ռիսկերը::</p> <p>Համայնքում ոռոգման համակարգը բացակայում է, քանի որ համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերը անջրդի են: Վերջինիս հանդիսանում է համայնքի այգեգործությամբ զբաղվելու ուժեղ կողմերից մեկը:</p> <p><b>Նախատեսվող աշխատանքները</b> Ծրագրի նպատակն է Տաշիր համայնքում հիմնել ինտենսիվ պտղատու այգի, որը լինելու է յուրահատուկ բիզնես մոդել, որովհետև.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Այստեղ կիրառվելու են կանաչ և օրգանական գյուղատնտեսական մեթոդներ:</li> <li>2. Մշակվելու են հնաավորինս օրգանիկ միզ՝ հաշվի առնելով վերջիններիս վեգետացիոն շրջանի առանձնահատկություններն ու դրանց համադրելիության հնարավորությունը:</li> <li>3. Ինտենսիվ այգին հանդիսանալու է միաժամանակ նաև ուսումնական կենտրոն՝ հնարավորություն ընձեռելով Տաշիրի և հարակից համայնքների</li> </ol>	100.000.000	10%	1. Միջազգային կազմակերպություններ և ծրագրեր 2. Ֆինանսական հաստատություններ	2022-2023թթ.

Ռազմավարական զարգացման ենթադրույթ և ուղղություն	Տեստավարող	Ենթաճրագրի հակիրճ նկարագրություն	Ընդհանուր բյուջե	Սեփական ներդրում	Գործընկերներ	Իրականացման տարի
		<p>գյուղատնտեսությամբ զբաղվողների համար՝ իրականացնել փորձի փոխանակություն, ստանալու կոնկրետ խորհրդատվություն և տեխնիկական աջակցություն:</p> <p>4. Ինտենսիվ այգով հետաքրքրված անձանց տրամադրելու է տնկիներ, մասնագիտական խորհրդատվություն և տեխնիկական աջակցություն:</p> <p>5. Բիզնեսի հիմնադրմանը զուգահեռ իրականացվելու է նաև շուկայահամման աշխատանքներ, պայմանավորվածություններ նք ձեռքբերվելու պոտենցիալ մթերողների և առևտրային ընկերությունների հետ:</p> <p><b>Ներդրման արժեքը</b> Ներդրումների պայմանական մոտավոր գումարը կազմում է 100.000.000 ՀՀ դրամ</p> <p><b>Կարևորությունը մարզի համար</b> Ծրագիրը հանդիսանում է այգեգործության, որպես բիզնեսի գաղափարի տարածման օրինակներից մեկը՝ խորհրդատվության և փորձի փոխանակման միջոցով: Այն ունի մի շարք կարևորություն. նախ՝ Տաշիր տարածաշրջանում ունենալով այսպիսի ծրագիր այն հանդիսանալու է նաև ցուցադրական գործունեություն՝ այդպիսով ապացուցելով տարածաշրջանում այգեգործությամբ զբաղվելու հնարավորությունը: Երկրորդ՝ այն ունի բնապահպանական ազդեցություն՝ իրականացնելով ոչ միայն ծառատունկ այլև ներդնելով ու տարածելով կանաչ և օրգանական գյուղատնտեսության վարման մեթոդները: Եվ վերջապես՝ այն տարածաշրջանում կապահովի ինտենսիվ այգեգործության և նորարարական մոտեցումների կիրառումը և տարածումը:</p>				
Կտավատի մշակություն և վերամշակում	«Թուխյան» ՍՊԸ	<p><b>Նկարագրություն</b> 2010 թ. -ից «Թուխյան» ՍՊԸ-ն զբաղվում է կտավատի ձեթի արտադրությամբ: Ձեթն արտադրվում է սառը մամլման եղանակով: Կարճ ժամանակում, նույն տեխնոլոգիայով՝ սառը մամլմամբ չզտված, ընդլայնվել է արտադրության տեսականին՝ ներառելով կանեփի, արևածաղկի, խաղողի կորիզի, ընկույզի, ծիրանի կորիզի, դեղձի կորիզի, սև տմինի ձեթեր և այլն: Ձիթայուղերը շաղկապում, փաթեթավորվում են և ներկայացվում գևորդին:</p> <p><b>Նախատեսվող աշխատանքները</b> Արտադրությունը զարգացել է , հասել մի աստիճանի, որ անհրաժեշտություն է առաջացել ընդլայնել ինչպես ծավալները: Ներկայումս արտադրության ծավալները կազմում են ժամում 50 կգ, ինչը թույլ չի տալիս շուկայում արտադրանքի որակին և պահանջարկին համապատասխան տեղ զբաղեցնել: Ուստի անհրաժեշտ է ընդլայնել ծավալները առնվազն 10 անգամ՝ հասցնելով ժամում 500կգ-ից մինչև 1տ: Այդ նպատակով անհրաժեշտ է ձեռք բերել նման արտադրողականություն ապահովող սարքավորումներ, ինչպես նաև արտադրողականության ծավալներին համապատասխան շղկացման հոսքագիծ: Արտադրության ծավալների և</p>	3,500,000	14%	1. Միջազգային կազմակերպություններ և ծրագրեր 2. Ֆինանսական հաստատություններ	2022-2023թթ.

Ռազմավարական զարգացման ենթաոլորտ և ուղղություն	Տեստավարող	Ենթաճրագրի հակիրճ նկարագրություն	Ընդհանուր բյուջե	Սեփական ներդրում	Գործընկերներ	Իրականացման տարի
		<p>տեսականու ընդլայնումը բնականաբար ենթադրում է արտադրական տարածքի մեծացում: Այս նպատակով «Թուֆյան» ՍՊԸ-ն ձեռք է բերել 1000քառ. մետր հողատարածք խճուղու բանուկ հատվածում:</p> <p>Արտադրության ծավալների ընդլայնումը կարող է նպաստել տարածաշրջանում կտավատի մշակության աճին:</p> <p>Նախագծային աշխատանքներն արդեն իսկ սկսված են, ինչպես նաև արտադրության ծավալները և տեսականին ընդլայնելու տեխնիկական անհրաժեշտ միջոցների ձեռքբերման նպատակով նույնպես տարբեր արտադրողների հետ ընթանում են շփումներ: «Թուֆյան» ՍՊԸ-ն վերոնշյալ աշխատանքներն իրականացնելու համար ունի ֆինանսական, տեխնիկական միջոցների օժանդակության անհրաժեշտություն:</p> <p><b>Ներդրման արժեքը</b>  Ներդրումների պայմանական մոտավոր գումարը կազմում է մոտ 3,500,000 ՀՀ դրամ՝ մոտ 1,500,000 ՀՀ դրամ յուրի մամլիչի (գտիչ) և մոտ 2,000,000 ՀՀ դրամ կտավատի սերմի գտիչի համար:</p> <p><b>Կարևորությունը մարզի համար</b>  Մարզի գյուղատնտեսության զարգացման համար անհրաժեշտ է ոչ միայն մշակաբույսերի մշակությունը, այլև դրանց լրացուցիչ արժեքի հավելումը: Այդ առումով այս ճրագիրն աչքի է ընկնում իր կարևորության: Այն ոչ միայն ենթադրում է կտավատի (համարվում է բարձրարժեք բույս) մշակության տարածքների ընդլայնում մարզում, այլև դրա հավելյալ վերամշակում և ավելի բարձր արժեքով յուրի ստացում: Այն օրինակ կարող է հանդիսանալ այլ ֆերմերների համար և դրանով իսկ խթանել բարձրարժեք գյուղատնտեսության զարգացումը մարզում:</p>				



## 4 ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

### 4.1 ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Մարզի գյուղատնտեսական զարգացման ռազմավարության իրագործումը և Գործունեության Ծրագրի կոնկրետ գործողությունների և միջոցառումների իրականացումը հստակ ֆինանսավորում է ենթադրում: Ֆինանսավորման հիմնական ուղղությունները հետևյալն են.

1. **Գործունեության Ծրագրի ֆինանսավորում**՝ ֆինանսական ռեսուրսների ներդրում կոնկրետ գործողությունների և միջոցառումների իրականացման համար: Ներդրումները կարող են լինել ցանկացած տիպի՝ կապիտալ կամ գործառնական, մեկանգամյա կամ կրկնվող, կոնկրետ կամ ընդհանրական և այլն:
2. **Ներդրումային ենթածրագրերի համաֆինանսավորում**՝ սահմանափակ մասնակցություն մոդելային օրինակելի ենթածրագրերի իրականացման ներդրումներում: Որպես կանոն՝ ծրագրային կամ դրամաշնորհային ֆինանսավորման տեսքով:
3. **Գործունեության Ծրագրի իրականացման ընթացքի մշտադիտարկման և արդյունքների գնահատման ֆինանսավորում**: Ֆինանսավորվում են ՄԱԳ իրականացման գործողությունները՝ տեղեկատվության կանոնավոր հավաքագրման գործընթացը, լոգիստիկ ծախսերը, անհրաժեշտ տեխնիկական ապահովվածությունն ու հաղորդակցությունը և այլն:
4. **Հարակից և օժանդակ ծախսերը**՝ գործավարություն, ներկայացուցչական ծախսեր, միջոցառումների և պրեզենտացիաների կազմակերպում, թարգմանություն և այլն:

Գործողության Ծրագրի ամբողջական ծավալով իրագործումը ենթադրում է մեծ ֆինանսավորում և լուրջ ներդրումների իրականացում: Ռազմավարության հստակության տեսանկյունից կարևոր է սահմանել այդ ֆինանսավորման ներգրավման աղբյուրները: Հիմնական աղբյուրները հետևյալն են.

1. ՀՀ Պետական Բյուջեն՝ ներառյալ սեփական և ներգրավված վարկային միջոցները:
2. ՀՀ Լոռու մարզի համայնքների բյուջեները (ներառյալ տարածքային զարգացման ֆինանսավորման շրջանակներում), որոնք կհամալրվեն ՀՀ Պետական բյուջեի հատկացումներից, տեղական հարկերի և վճարների հավաքագրումից և այլն: Վերջին աղբյուրից սովորաբար համաֆինանսավորվում են տարբեր միջազգային ծրագրերի կողմից օժանդակվող համայնքային ծրագրերը: Համայնքային բյուջեների եկամուտներից ֆինանսավորման հնարավորությունները զգալի ավելացել են երկրում վերջին ամիսներին իրականացված համայնքների խոշորացման գործողություններից հետո: Խոշորացման արդյունքում համայնքները սկսել են լուրջ ֆինանսական միջոցներ տնօրինել, որոնք թույլ են տալիս լուրջ ներդրումային և ենթակառուցվածքային ծրագրեր թիրախել:
3. Միջազգային ֆինանսական հաստատությունների և միջազգային զարգացման կազմակերպությունների կողմից մարզում իրականացվող ծրագրերին հատկացվող ֆինանսավորումը: Միջազգային կազմակերպությունների թվում կարելի է հիշատակել հետևյալ հիմնականները՝ Համաշխարհային Բանկը (WB), Եվրոպական Միությունը (ԵՄ, EU), Ասիական Չարգացման Բանկը (ADB), Միավորված Ազգերի Կազմակերպության կառույցները (UN), Գյուղատնտեսության Չարգացման Միջազգային Հիմնադրամը (ԳՉՄՀ, IFAD), Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (FAO), ԱՄՆ Միջազգային Չարգացման Գործակալությունը (USAID), Գերմանիայի Ֆեդերալ Կառավարության Չարգացման Բանկը (KfW), Շվեյցարիայի, Ավստրիայի, Նիդեռլանդների, Ճապոնիայի և այլ երկրների միջազգային համագործակցության և զարգացման գործակալությունները (SDA, ADA, RVO, JICA), և այլն:
4. ՀՀ Լոռու մարզում զարգացման ծրագրեր իրականացնող տեղական և միջազգային հասարակական և բարեգործական կազմակերպությունների, հիմնադրամների և այլ

կազմակերպությունների (օրինակ՝ «ՌԶԳ» ՀԿ, «Կանաչ Արահետ» ՀԿ, և այլն), անհատ բարերարների կողմից հատկացվող ֆինանսավորումը:

5. Մասնավոր ներդրողների (այդ թվում բանկերի) կողմից տարբեր գործարար և ձեռնարկատիրական, ինչպես նաև սոցիալական ծրագրեր իրականացնելու համար հատկացվող ֆինանսավորումը:

## 4.2 ՄՇՏԱՂԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՊԼԱՆՅԱՏՈՒՄ

Ընթացիկ գործընթացների կանոնավոր մշտադիտարկումը, ինչպես նաև ելակետային իրավիճակի, միջանկյալ և վերջնական արդյունքների գնահատումները ցանկացած ռազմավարության կամ ծրագրային միջամտության անբաժանելի մասն են հանդիսանում: Մշտադիտարկման և գնահատման (ՄԱԳ) համակարգը սովորաբար ներկառուցվում է ցանկացած նախաձեռնության իրականացման կառավարչական կառուցվածքում և դրսևորվում է հստակ մշակված մանրամասն գործիքակազմով:

Ավելին, մշտադիտարկման գործիքակազմը ենթադրում է քանակական տեղեկատվության ինտենսիվ և կանոնավոր հավաքագրում և համադրություն նախապես սահմանված նպատակներին: Գնահատման գործառույթն ունի կոնկրետ «պահային» բնույթ՝ ելակետային, միջնաժամկետ և վերջնական, և ավելի շատ որակական բնույթ ունի: Մշտադիտարկման գործառույթն իրականացնում է լայն լիազորություններով և բավականաչափ անկախությամբ օժտված, բայց նախաձեռնության իրականացման թիմի անդամ հանդիսացող մասնագետը: Գնահատումները սովորաբար իրականացնում են լրիվ անկախ և նախաձեռնության իրականացման հետ որևէ կապ չունեցող մասնագիտական կառույցներ:

ՄԱԳ համակարգը միտված է կառավարչական համապատասխան արդիական տեղեկատվության նպատակաուղղված հավաքմանը և մշակմանը՝ ընթացիկ գործառնական և տակտիկական կառավարչական հիմնավորված որոշումների ընդունմանը ծառայելու նպատակով: Համապարփակ և ճշգրիտ մշտադիտարկման տեղեկատվությունը կարող է ժամանակին վեր հանել առաջացած խնդիրները, իրականացվող գործողություններին խոչընդոտող հանգամանքները, ի հայտ եկած ռիսկերը և այլն: Դա թույլ է տալիս ժամանակին արդյունավետորեն արձագանքել ստեղծված իրավիճակին և ընդունել անհրաժեշտ որոշումներ՝ ճշգրտող, ռիսկերը մեղմող և խոչընդոտները չեզոքացնող կառավարչական որոշումների տեսքով:

Իր հերթին, գնահատումները թույլ են տալիս հիմնավորված դատողություններ իրականացնել ծրագրի նախասահմանված վերջնարդյունքների ապահովման աստիճանի, չապահովման պատճառների, հեռահար հորիզոնում ապահովված ազդեցության, վերջնարդյունքների կայունության և իրականացված նախաձեռնության (օրինակ՝ ռազմավարության) մյուս ասպեկտների վերաբերյալ: Գնահատումները, դրանց ներքո արված եզրահանգումները, որպես կանոն, հիմք և ելակետ են հանդիսանում հետագա նախաձեռնությունների նախապատրաստման համար:

Մարզի գյուղատնտեսության զարգացման ռազմավարությունը բացառությունն է և ենթակա է պարտադիր ՄԱԳ-ի: Մարզի գյուղատնտեսության զարգացման ռազմավարության իրականացման մշտադիտարկման գործառույթը կարող է իրականացնել մարզպետարանի Գյուղատնտեսության և Բնապահպանության Վարչությունը: Գնահատման գործառույթը կարող է իրականացնել մարզպետարանի հատուկ այդ նպատակով առանձին ստեղծված անկախ ստորաբաժանում, որը կարող է մշտադիտարկել նաև մարզպետարանի կողմից իրականացվող բոլոր (ոչ միայն գյուղատնտեսական) զարգացման ծրագրերն ու գործողությունները: Միաժամանակ, գնահատման այդ ստորաբաժանումն ուղղակի սերտ կապի և համագործակցության մեջ կլինի շահառուների տարբեր խմբերի, շահեկից և

գործընկեր կազմակերպությունների, մատակարարների և ծառայություններ մատուցողների, պետական կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ: Գնահատման բուն գործողությունները կիրականացնեն համապատասխան պատրաստվածություն, որակավորում և փորձառություն ունեցող մասնագետները՝ նախասահմանված մեթոդաբանությամբ և գործիքակազմով:

Մշտադիտարկման գործողությունները կիրականացվեն կանոնավոր ձևով, արդյունքների ամփոփումը՝ ամենամսյա կտրվածքով: Գնահատման գործողությունները կիրականացվեն տարեկան կտրվածքով, ինչպես նաև կոնկրետ ենթածրագրերի իրականացման ավարտի և վերջնարդյունքների ապահովման դրությամբ: ՄևԳ վերջնական տարեկան հաշվետվությունը կամփոփվի տարվա ընթացքում մեկ անգամ՝ գործողությունների մշտադիտարկման և վերջնարդյունքների գնահատման վերաբերյալ ստացված արդյունքների ամփոփ վերլուծության հիման վրա:

Տարեկան հաշվետվությունը պատրաստելուց հետո կկազմակերպվի քննարկում, որին կմասնակցեն ինչպես մարզային և կենտրոնական իշխանությունները, այնպես էլ քաղաքացիական հասարակության և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: